

Ի՞նչ ՀԱՐՑԵՐ
ԿԱՐՈՂ ԵՆ ԾԱԳԵԼ
ԵՐԵՒԱՅԻ
ՄՈՏ
ԿԻՐՈՒՄԻ
ՄԱՍԻՆ



ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ի՞նչ շարժեր կարող են ծագել երեւութի սոս վիրուսի մասին

Ի՞նչ է կորոնավիրուսը:

Վիրուսները մանրագույն մասնիկներ են, որոնք մարդու օրգանիզմ ներթափանցելիս կարող են վատ ինքնազգացողություն առաջացնել:

Դրանք կարելի է տեսնել միայն մանրադիտակի տակ: Աշխարհում շատ վիրուսներ կան, և նոր կորոնավիրուսը դրանցից մեկն է: Այն հայտնաբերել են գիտնականները, երբ փորձել են հասկանալ, թե ինչու են տվյալ վիրուսով վարակվում ավելի ու ավելի շատ մարդիկ:



Ինչպե՞ս կարող եմ հասկանալ, որ ես հիվանդ եմ:

Որոշ մարդիկ ունեն բարձր ջերմություն և հազ, ինչ-որ մեկը պարզապես մի քիչ թուլլ և հոգնած է զգում իրեն, ոմանք էլ ունեն ուժեղ հազ, ինչի պատճառով սկսում են դժվարությամբ շնչել: Երեխաները սովորաբար ծանր վիճակում չեն հայտնվում, բայց, եթե դուք վատ եք զգում, անհապաղ տեղեկացրե՛ք ծնողներին:



Ի՞նչ շարժեր կարող ես ծագել երեւոթի մոտ ՎԻՐՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ինչու՞ են բոլորը խոսում վիրուսի մասին և վախենում դրանից:

Այն շատ արագ է տարածվում ամբողջ աշխարհում, բոլորովին նոր է, և նրա դեմ դեռ չի հայտնաբերվել դեղորայք կամ պատվաստանյութ:



Ի՞նչ շարժեր կարող են ծագել երեւակո՞ւմ սո՞ս վիրուսի մասին

Ինչու՞ է այն այդքան վարակիչ:

Երբ մարդը փռչտում կամ հագում է, դուրս են գալիս փոքրիկ կաթիլներ, որոնցում վիրուսային մասնիկներ են պարունակվում:

Որպեսզի առողջ մարդը հիվանդանա, նա բավական է նախ շոշափի ինչ-որ մակերես, որի վրա եղել են այդ կաթիլները, իսկ հետո դիպչի իր աչքերին, քթին կամ բերանին:

Օրվա ընթացքում մենք շոշափում ենք բազմաթիվ մակերեսներ: Այդ պատճառով այդքան կարևոր է կեղտոտ ձեռքերով չդիպչել դեմքին և հնարավորինս հաճախ մանրակրկիտ լվանալ ձեռքերը:



Ի՞նչ չարձեր կարող ես ծագել երեւութի սոս վիրուսի մասին

Ինչպե՞ս խուսափել վարակվելուց:

- Մի մոռացեք լվանալ ձեռքերը օճառով և ջրով ոչ պակաս, քան 20 վայրկյան ուտելուց առաջ, զուգարանից օգտվելուց, փողոցից տուն վերադառնալուց և տնային կենդանիների հետ խաղալուց հետո
- փռշտալիս և հազալիս փակել բերանը բազուկով կամ ավելի լավ է՝ մեկանգամյա օգտագործման անձեռոցիկով, որը օգտագործելուց անմիջապես հետո անհրաժեշտ է դնել նետել, ապա լվանալ կամ փստահանել ձեռքերը
- փորձեք ձեռքերով չդիպչել աչքերին, քթին և բերանին
- հեռու մնացեք փռշտացող և հազացող մարդկանցից ոչ պակաս, քան 1 մետր հեռավորության վրա
- ժամանակավորապես չհավաքվել ընկերների հետ զբոսանքի կամ կինոյի և հնարավորության դեպքում մնալ տանը:



Ի՞նչ շարժեր կարող են ծագել երեւութի սոս վիրուսի սպառն

Ինչու՞ են մարդիկ դիմակներ կրում:
Ես նույնպե՞ս պետք է կրեմ:

Դիմակները պետք է կրեն նրանք, ովքեր արդեն հիվանդացել են, երբ նրանք գտնվում են մարդաշատ վայրերում, օրինակ՝ հասարակական տրասպորտում կամ խանութում:

Դիմակներ կրելու նպատակն այն է, որ վիրուսները փռշտալիս կամ հազալիս չտարածվեն այլ մարդկանց վրա:

Բացի այդ, դրանք օգտագործվում են այն դեպքերում, երբ անհրաժեշտ է երկար ժամանակ գտնվել հիվանդ մարդու հետ, լինել մեկ սենյակում մոտ հեռավորության վրա:

Բժշկական դիմակները պետք են բժիշկներին և հիվանդի հարազատներին, ովքեր գտնվում են հիվանդանոցում հիվանդների հետ:

Ցանկալի է կրել սովորական դիմակ, երբ գնտվում ես մարդաշատ վայրերում, օրինակ խանութում: Դիմակ կրելուց ևս պետք է լվանալ ձեռքերը, ճիշտ հազալ և փռշտալ, խուսափել դեմքին դիպչել ձեռքերով:




Հնարավոր է մահանալ կորոնավիրուսից:

Վարակվածների մեծ մասը ունեն առողջանալու հնարավորութիւն:

Բայց կան մարդիկ, ովքեր հիվանդութիւնը շատ դժվար են տանում՝ տարեցները և նրանք, ովքեր արդէն իմունիտետի հետ կապված խնդիրներ ունեն:

Նրանց առողջութիւնը կարող է վտանգի տակ լինել, եթէ ժամանակին լուրջ բուժում չսկսվի հիվանդանոցում:
Հիշի՛ր՝ բժիշկներն անում են հնարավոր ամեն ինչ, որպէսզի օգնեն հիվանդացածներին ապաքինվել, և որպէսզի վիրուսը չտարածվի:



Ի՞նչ շարժեր կարող ես ծագել երեւութի սոս փրոփսի սասիւ

Արդո՞ք դա նշանակում է, որ տատիկիս ու պապիկիս կյանքը վտանգված է:

Ոչ, եթե մենք բոլորս պատասխանատու լինենք և հետևենք կանխարգելիչ միջոցառումներին: Տարեցները, իսկապես, կարող են կորոնավիրուսով ավելի ծանր հիվանդանալ, քան մյուսները, և նրանք կարող են ավելի դժվար առողջանալ այլ առողջական խնդիրների պատճառով: Հնարավոր է, որ որոշ ժամանակ մենք ստիպված լինենք չայցելել տատիկին ու պապիկին: Նրանց և մեզ բոլորիս համար ավելի լավ կլինի ոչ միայն մնալ տանը, այլ նաև մանրակրկիտ և հաճախ լվանալ ձեռքերը:



Ես այլևս երբեք դուրս չե՞մ գա տնից:

Մի անհանգստացեք, դա ժամանակավոր է: Դասերը շարունակվում են, պարզապես տնից: Դպրոցները փակվում են, և շատ մարդիկ ստիպված են աշխատել հեռակա և դուրս չգալ տնից մի քանի շաբաթ՝ վիրուսի տարածումը դանդաղեցնելու և կանխելու նպատակով:

Դա կօգնի բժիշկներին ավելի արդյունավետ բուժել կորոնավիրուսով վարակվածներին, և օգնել այլ հիվանդություններ ունեցող մարդկանց:

